հարձակվել, հիվանդություն բերել նրան, նույնիսկ փախցնել, մահ պատճառել[67]»:

Երեխայի պորտը կտրելուց հետո տատմերը, եթե նորածինը աղջիկ էր՝ թաղում էր պորտը տան մի անկյունում, որ նա լավ տնտեսուհի դառնա, իսկ եթե արու էր՝ թաղում էր գոմում, որ լավ անասնապահ լինի: Ապա նորածնին խոտած ելնում էր կտուրը, կտրովը պտույտ գալիս, ցույց էր տալիս արեգակին: Թվում է թե լույս աշխարհ եկած նոր էակը նրան ներկայացնելու և արևից նրա համար հովանավորություն, հաջողություն հայցելու նպատակով, աղոթում էր արևին տալ երեխային առողջ և բախտավոր ապագա[68]: Ապա իջնում էր և երեխային դնում մաղի վրա: Մաղը այս անգամ էլ պիտի պաշտպաներ գետնին վիտացող չարքերից[69]: Մաղը դրվում էր միշտ մոր աջ՝ աջողակ, բարի հրեշտակներով պաշտպանված կողմը: Նորածնին արևին ցույց տալու արարողությունը տեղի էր ունենում նաև այլ հայաբնակ վայրերում, օրինակ՝ Հարևան Մեղրու շրջանի Շվանիձոր (Շիվանաձոր) գյուղում, Բորչալուում:

Տատմերը շտապում էր վազել ազգականներին և բարեկամներին աչքալուսանք անելու: Կանայք այցելում էին ծննդկանին, բերելով ծննդակավաք՝ ձուածեղ կամ մեղր, շփոթ, յուղ: Երեխայի ծնվելը ուրախություն էր ամբողջ տոհմի, համայնքի համար: Առանձնապես շնորհավորում էին, երբ տղա էր ծնվածը, իսկ աղջիկ ծնված դեպքում՝ ցանկություն էին հայտնում, որ գլխին էլ տղա լինի:

Մի շարք համայնական միջոցների էին դիմում, որպեսզի երեխան չար ոգիներից չհօխվի: Այդ նպատակով նրա բարձի տակ օրորոցում դնում էին մի պողպատե, մեծ մասամբ սուր իր—ատեղ, մախաթ, դաշույն, կամ հացի մեջ փաթաթած աղ:

Օրորոցը[70] nւoրnւցը Զանգեզուրում իր ձևով ոչնչով չի տարբերվում ուրիշ հայաբնակ գավառներում, Վրաստանում և ընդհանրապես Կովկասում գործածվողից: Այդ ձևը հետապնդում է մի քանի նպատակ, այն է՝

ա. դյուրին օրորելու հարմարություն,

բ. քնած ժամանակ երեխայի մեղը այնպես հեռացնելու, որ նա չզարթնի. դրա համար նրա այս ու այն կողմ շարժվելու հնարավորությունը սահմանափակելու և նրան անշարժ պահելու և

գ. հեշտությամբ մի տեղից մյուսը տեղափոխելու—հատակի վրայից տախտի վրա, տան ներսից՝ դուրս, սրճար և այլն:

Օրորոցը ներկայացնում է երկար ու նեղ, ցածրիկ կողերով արկղ, որի հատակը կազմված է զուգահեռ, իրարից փոքր հեռավորությամբ դասավորված ձողերով: Արկղի նեղ կողերն ամրացրած են բարձր ծռված բարակ ու նեղ տախտակե աղեղների երկար իջեցրած թևերի՝ կամարեէրի վրա: Աղեղների թևերը նստեցրած են թիկնալարի ձևով կարած հաստ տախտակների վրանէրի վրա, իսկ գագաթները իրար հետ միացրած են կլորացրած ձողով՝ լուծ, որից

---

67 ա Վ. և Ն. Վաչագան գյուղերում:

68 Այդ վայրկյանից արևը դառնում էր երեխայի հովանավոր արև, երեխայի կյանքի իսկ հոգածուն, որը նրա կողմից հարկ եղած դեպքերում կանչվում էր վկա՝ «արև վկա՞» և որին մեկ ուրիշը նրա համար զոհ էր մատուցանում՝ «արևիդ մատաղ»:

69 Ամենահին ժամանակներից հավատում էին, որ ցանցը կամ ցանցանման հյուսվածքը պաշտպանում էր մարդուն չար ոգիներից, քանի որ նրանք չեն կարող դիպչել, վնասել մարդուն՝ խճճվելով ցանցի մեջ:

70 Մեղրու բարբառով՝ ըnւ՛ւրnւց, ուրn՛ւրnւց, rn՛ւրnւց: